ՀՏԴ 796.012.1 DOI: 10.53068/25792997-2025.2.15-305

ԱՈՒՏԻԶՄՈՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Վ. Ռ. Չախոյան,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Աուտիզմ, նախադպրոցական տարիք, շարժողական կարողություններ, ադապտիվ ֆիզիկական կուլտուրա(ԱՖԿ):

Հետազոտության արդիականություն: Այսօր նախադպրոցական ուսումնական հաստատություններում ժամանակակից կրթությունն ու դաստիարակությունը երեխայակենտրոն է, և ինչպես տարբեր երկրներում, այնպես էլ Հայաստանում իրականացվում է ներառական սկզբունքներով: Ներառական կրթության պայմաններում, զարգացման խանգարում ունեցող երեխաների հետ աշխատանքը ենթադրում է անհատական մոտեցում՝ հաշվի առնելով երեխայի ֆիզիկական զարգացման մակարդակը, շարժողական կարողությունները և զարգացման առանձնահատկությունները: Ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան տարբեր հեղինակների հետազոտություններում նշվում է, որ ճիշտ և համապարփակ մոտեցումն՝ ուղղված շարժողական կարողությունների ձևավորմանը, ունի մեծ ազդեցություն երեխայի առողջության, ճանաչողական կարողությունների և սոցիալական ներառման վրա [2,3,6]:

Վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում նկատվում է աուտիզմով երեխաների թվի շարունակաբար աճ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, աուտիզմ ախտորոշում ունի աշխարհի մանկահասակ բնակչության 1%-ը[12]:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից ներկայացված սուտիզմով երեխաների մասին վիճակագրական հստակ տվյալներ չկան, քանի որ շատ դեպքեր մնում են չախտորոշված:

Աուտիզմի ախտանիշները առավել արտահայտված են լինում 18-24 ամսականում[12]: Այն բացասական ազդեցություն է թողնում երեխաների շարժողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա, այդ իսկ պատճառով, նախադպրոցական տարիքում անհրաժեշտ է շեշտադրել ֆիզկուլտուրայի միջոցով շարժողական կարողությունների ձևավորումը [8]:

Աուտիզմով երեխաները արտաքինից ֆիզիկապես առողջ և շարժողական առումով պատրաստակամ են թվում, սակայն շարժողական կարողությունները արտացոլող վարժությունների կատարման ընթացքում նկատվում են էական դժվարություններ:

Աուտիզմը ազդում է հաղորդակցման, փոխհարաբերությունների, զգայնության, ուշադրության կետրոնացման, աչք-աչք կոտնակտի վրա: Բազմաթիվ հետազոտողներ իրենց կողմից կատարած ուսումնասիրությունների արդյունքներում հիմնավորում են, որ աուտիզմ ունեցող նախադպրոցական երեխաների 60-80%-ը ունեն շարժողական կարողությունների զարգացման խանգարումներ, որոնք արտահայտվում են տարբեր վարժություններ կատարելու ժամանակ՝ քայլքի, վազքի, ցատկերի, մագլցման, սողանցման, գլորման, նետման և բռնելու, հավասարակշռության, կոորդինացիայի, թիմային խաղերերում ընդգրկվելու, բարդ շարժումների պատկերացման և կատարման դժվարություններով: Նրանք ունենում են ցածր մկանային տոնուս, որը բացասաբար է ազդում ընդհանուր շարժողական ակտիվության վրա[1,5]:

Աուտիզմով նախադպրոցականների մոտ զգայական ինտեգրացիայի խանգարումները նույնպես կարևոր դեր են խաղում շարժողական կարողությունների թերի զարգացման մեջ, քանի որ երեխաները դժվարանում են ճիշտ մտապահել և վերամշակել զգայական տեղեկատվությունը: Կարևոր է նշել, որ շարժողական կարողությունների ձևավորման խանգարումների ծանրության աստիճանը ուղիղ հարաբերական է սոցիալական հաղորդակցման խնդիրների, կոգնիտիվ կարողությունների նվազման և կրկնվող վարքագծի դրսևորումների հետ: Այս բազմագործոն փոխկապակցվածությունը ցույց է տալիս, որ շարժողական կարողությունների ձևավորումը կարող է նպաստել աուտիզմով նախադպրոցականների ընդհանուր զարգացմանը և սոցիալականացմանը[1,5,8]:

SPARK (Simons Foundation Powering Autism Research and Knowledge) հետազոտությունը, որին մասնակցել են աուտիզմով ավելի քան 30.000 մարդ և նրանց ընտանիքների անդամներ, ոլորտի ամենամասշտաբային գիտական նախագծերից մեկն է: Հետազոտության շրջանակներում A.N. Bhat-ի կողմից իրականացված ուսումնասիրության մեջ վերլուծվել են 18,612 աուտիզմով երեխաների տվյալները՝ նպատակ ունենալով գնահատել շարժողական կարողությունների ձևավորման խանգարումների և աուտիզմի այլ դրսևորումների միջև կապերը: SPARK ծրագրի տվյալների հիման վրա հաստատվեց, որ շարժողական կարողու-

թյունների զարգացման ցածր մակարդակը հանդիպում է գրեթե բոլոր աուտիզմով երեխաների մոտ և պահանջում է լուրջ ուշադրություն աուտիզմով երեխաների համար ծրագրերի մշակման ժամանակ[5]:

Yang Y. և այլոց աշխատանքների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների շարունակական ազդեցությունը էական դրական արդյունք է ունենում աուտիզմով երեխաների շարժողական կարողությունների ձևավորման և խանգարման ծանրության աստիճանի բարելավման վրա[8,10]:

Ներկայացված գիտական փաստերը ցույց են տալիս, որ շարժողական կարողությունների ձևավորման խանգարումները աուտիզմով երեխաների մոտ ունեն բարդ և բազմաշերտ բնույթ: Նախադպրոցական տարիքը կարևոր շրջան է այս խանգարման հայտնաբերման և ներգործության համար, քանի որ վաղ միջամտությունը կարող է զգալիորեն բարելավել երեխայի ապագա զարգացման տեսլականը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ թեև աուտիզմով նախադպրոցականների համակողմանի զարգացման լավագույն միջոցը ադապտիվ ֆիզիկական կուլտուրան է, և հրատարակված են բազմաթիվ հետազոտություններ շարժողական կարողությունների ձևավորման վերաբերյալ, սակայն միջազգային հանրության կողմից ընդունված մեթոդական մոտեցումներ դեռևս գոյություն չունեն: Վերոնշյալ խնդիրը համադրելով ՀՀ-ում աուտիզմով նախադպրոցականների վերաբերյալ հստակ վիճակագրական տվյալների բացակայության հետ, վկայում է այն մասին, որ ընտրված թեման համակարգված հետազոտությունների կարքի ունի:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել աուտիզմով նախադպրոցականների շարժողական կարողությունների ձևավորման մեթոդական մոտեցումները:

Հետազոտության խնդիրներ:

1.Բացահայտել ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի դերը և նշանակությունը աուտիզմով նախադպրոցականների շարժողական կարողությունների ձևավորման գործընթացում:

2. Ուսումնասիրել աուտիզմով նախադպրոցականների շարժողական կարողությունների ձևավորման մեթոդական մոտեցումները:

3. Ուսումնասիրել աուտիզմով նախադպրոցականների շարժողական կարողությունների ձևավորման խանգարումների արտահայտման ձևերը:

4. Ուսումնասիրել աուտիզմով նախադպրոցականների մոտ շարժողական կարողությունների ձևավորման խանգարման հիմնական դրսևորումները:

Հետազոտության մեթոդներ և կազմակերպում: Հետազոտության մեթոդներն են՝

1. գիտամեթոդական գրականության հավաքագրում, ուսումնասիրում և վերլուծություն,

2. միջազգային փորձի ուսումնասիրում:

2025թ.-ի փետրվարից մինչև օգոստոս ամիսները ուսումնասիրվել և վերլուծվել են 2014-2025թթ. լույս տեսած շուրջ 30 գրական, գիտամեթոդական և ատենախոսական աշխատանքներ: Կատարված ուսումնասիրությունները օգնեցին բացահայտել և փաստել Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, եվրոպական և ասիական տարբեր երկրների մասնագետների կարծիքները և մոտեցումները հիմնախնդրի վերաբերյալ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Աուտիզմով նախադպրոցականների շարժողական կարողությունների ձևավորման ընթացքում նկատվում է տեսողության ընկալման և շարժողական ոլորտի համատեղ աշխատանքի ոչ լիարժեքություն, արգելքների հաղթահարման դժվարություններ, տարածության մեջ կողմնորոշման և հավասարակշռության խնդիրներ, սեփական շարժումների և մարմնի դիրքի զգացողության խանգարումներ, նրանց մոտ բացակայում է շարժողական գործողությունների կատարման սահունությունն ու ռիթմի զգացողությունը [9]: Վերոնշյալ խանգարումների հետևանքով նրանց մոտ առաջանում են դժվարություններ ԱՖԿ պարապմունքների ժամանակ հրահանգների լսելու, կատարելու և վերարտադրելու ընթացքում[1]:

Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի դերը աուտիզմով նախադպրոցականների մոտ

Այս հիմնախնդիրների լուծման հարցում շատ կարևոր է ԱՖԿ-ի դերը: ԱՖԿ-ն ֆիզիկական կուլտուրայի մի մաս է, որը բազմաբնույթ վարժությունների միջոցով նպաստում է երեխաների ֆիզիկական վերականգմանը, շարժողական կարողությունների ձևավորմանը և սոցիալականացմանը: Ադապտիվ ֆիզիկական կուլտուրան դիտարկվում է որպես շտկող-փոխհատուցող և բուժիչ-առողջարարական ներգործություն: ԱՖԿ-ի մեթոդական մոտեցումները ներառում են անհատական և խմբային պարապմունքներ, որոնք հարմարեցված են յուրաքանչյուր երեխայի հատուկ կարիքներին և հնարավորություններին[2,4]:

ԱՖԿ-ն նպաստում է մկանային տոնուսի բարելավմանը, որը հատկապես կարևոր է աուտիզմով նախադպրոցականների համար, որոնք հաճախ ունեն հիպոտոնիա (ցածր մկանային տոնուս):

Զգայական ինտեգրացիայի տեսանկյունից ԱՖԿ-ն ապահովում է բազմազան զգայական փորձառություններ, որոնք օգնում են երեխաներին ավելի լավ մշակել և ինտեգրել զգայական տեղեկատվությունը:

Թիմային խաղերը և վարժությունները սովորեցնում են կանոնների պահպանման, համագործակցության և հաղորդակցման հմտություններ: Այս փորձը հատկապես արժեքավոր է սոցիալականացման հարցում դժվարություններ ունեցող աուտիզմով երեխաների համար:

Ֆունկցիոնալ ինքնուրույնության տեսանկյունից ԱՖԿ-ն զարգացնում է ինքնասպասարկման հմտություններ՝ հագուստ փոխել, անձնական հիգիենա և սնվելու հմտություններ: Շարժողական կարողությունները, որոնք ձևավորվում և զարգանում են ԱՖԿ-ի պարապմունքների ընթացքում, փոխանցվում են առօրյա գործունեության մեջ:

Ինչ վերաբերում է երկարաժամկետ ազդեցությանը, ապա ԱՖԿ-ն նպաստում է ակտիվ ու առողջ ապրելակերպի հիմքերի ստեղծմանը:

Հետևաբար, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները պետք է ուղղված լինեն շարժողական կարողությունների ձևավորման խանգարումների համակողմանի փոխհատուցմանը:

Մեթոդական մոտեցումները

Աուտիզմով նախադպրոցականների մոտ շարժողական կարողությունների ձևավորումը պետք է հիմնված լինի յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունների, խնդրին համապատասխան անվտանգ միջավայրի ստեղծման, թիմային խաղերում համագործակցության, հաջողությունների խրախուսման և մոտիվացիայի բարձրացման համակարգի վրա[4,6]: Վերջին տարիների գրական աղբյուրների ուսումնասիրումն ու վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մի քանի մեթոդական ցուցումներ, որոնց կիրառման դրական ազդեցությունը ապացուցված է թե պրակտիկ հետազոտություններում, թե մեծածավալ վերլուծություններում:

Yang Y. և այլոց կատարած հետազոտությունները փաստում են, որ շարժախաղերը կարևոր միջոց են, ինչպես շարժողական կարողությունների, այնպես էլ սոցիալական հմտությունների զարգացման համար: Նման մարզումների արդյունքում նկատվում է կարծրա-

տիպային վարքի նվազում, սոցիալական փոխգործակցության և դասերին մասնակցության աճ: Նրանց կողմից ուսումնասիրվել է 3–6 տարեկան աուտիզմով երեխաների համար մինի–բոասկետբոլի մարզման 12-շաբաթյա ծրագրի (mini-basketball training program (MBTP)) ազդեցությունը: Հետազոտության արդյունքում երկու փորձարարական խմբերն էլ ցույց են տվել սոցիալական հաղորդակցման հմտությունների էական բարելավում: Yang Y. և գործընկերների կարծիքով շաբաթական առնվազն 5 անգամ գնդակով շարժախաղերի ինտեգրումը՝ որպես լրացուցիչ ռազմավարություն, նպաստում է երեխաների շարժողական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, հաղորդակցության խնդիրների նվազեցմանը և կյանքի որակի բարելավմանը [10]:

Վերոնշյալ հետազոտությունը չնայած հավաստիության և ստուգողական խմբերում գրանցած բարձր արդյունքների՝ իրատեսական չեն մեր իրականության համար, քանի որ պահանջում են շաբաթական առնվազն 5 անգամյա մարզումներ, ինչը չի համապատասխանում ՀՀ նախադպրոցական կրթական հաստատությունների կրթական ծրագրին:

Touali R. և այլք նշում են, որ ԱՖԿ ծրագրերը պետք է ներառեն շարժողական կարողությունների համկողմանի զարգացման համալիրներ՝ զգայական համակարգի ակտիվ ներառմամբ: Ապացուցված է, որ զգայական համակարգի ներառմամբ վարժությունները նպաստում են աուտիզմով երեխաների շարժողական կարողությունների ձևավորման մակարդակի արագ և նշանակալի աճին, սակայն կարծրատիպային վարքի հարցում արձանագրված բարելավումները վիճակագրորեն հավաստի չեն: Այս հետազատությունը բացահայտում է, որ բազմակողմանի զգայական խթանների օգտագործմամբ ԱՖԿ պարապմունքներն ունեն բարձր արդյունավետություն: Նման խթաններ կարող են հանդիսանալ՝ լույսը, ձայնը, հպումները և այլն[11]:

Յուրաքանչյուր մոտեցում պետք է հարմարեցվի երեխայի անհատական կարողություններին, ֆունկցիոնալ վիճակին և ֆիզիկական պատրաստվածությանը: Առաջադրանքներն պետք է լինեն կարճ, բազմաբովանդակ՝ հաշվի առնելով վարքը և մոտիվացիան, ցանկալի է օգտագործել պատկերավոր, գույնզգույն իրեր (օղակներ, գնդակներ և այլն), ձայնային և լուսային ազդակներ, ինչը կօգնի բարձրացնել մասնակցության ակտիվությունը[11]:

Ketcheson L. և այլոց կատարած հետազոտությունները փաստում են, որ վաղ միջամտությունը ԱՖԿ-ի պարապմունքների միջոցով կարևոր միջոց է աուտիզմով նախադպրոցականների համալիր զարգացման համար: Նման

ծրագրերի արդյունքում նկատվում է շարժողական կարողությունների ձևավորման զգալի բարելավում, ֆիզիկական ակտիվության նշանակալի աճ և սոցիալական գործընթացի բարելավում: Նրանց կողմից ուսումնասիրվել է 4–6 տարեկան 20 աուտիզմով երեխաների համար շարժողական կարողությունների ձևավորման 8-շաբաթյա ինտենսիվ ծրագրի ազդեցությունը: Հետազոտության արդյունքում փորձարարական խումբը (11 երեխա) ցույց է տվել վիճակագրորեն նշանակալի բարելավումներ[7]:

Չնայած ներկայացված աշխատանքները արդի են և հրատարակված են վստահելի և հեղինակավոր պարբերականներում՝ հաճախ հանդիպում են իրարամերժ պնդումներ՝ օրինակ մի դեպքում նշվում է, որ ԱՖԿ մարզումները դրական ազդեցություն են ունենում կարծրատիպային շարժումների վերացման գործում, մեկ այլ դեպքում ասվում է, որ կարծրատիպային շարժումների նվազեցման հարցում վիճակագրորեն հավաստի փոփոխություններ չեն նկատվում:

Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի կանոնավոր պարապմունքների շնորհիվ հատուկ ընտրված վարժությունների կիրառմամբ աուտիզմ ունեցող նախադպրոցականների մոտ շտկվում են խանգարված շարժողական կարողությունները, նվազում է տագնապայնությունը, ակտիվանում է շրջակա աշխարհի հետ շփումը, բարելավվում է սովորելու ունակությունը[1]:

Եզրակացություն: Մասնագիտական գրականության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզվեց, որ աուտիզմը բացասական ազդեցություն է թողնում շարժողական կարողությունների ձևավորման վրա, սակայն, վաղ և համակարգված միջամտությունը, կարող է էականորեն բարելավել աուտիզմով նախադպրոցականների շարժողական կարողությունները, նպաստել նրանց ֆիզիկական, ճանաչողական և սոցիալական ներառմանը: Շարժողական կարողությունների ձևավորման խանգարումները արտահայտվում են տարբեր վարժություններ կատարելու ժամանակ՝ քայլքի, վազքի, ցատկերի, մագլցման, սողանցման, գլորման, նետման և բռնելու, հավասարակշռության, կոորդինացիայի, թիմային խաղերերում ընդգրկվելու, բարդ շարժումների պատկերացման և կատարման դժվարություններով: Աուտիզմով նախադպրոցականների շարժողական կարողությունների ձևավորման խանգարումների հիմնական դրսևորումներն են՝ տեսողության ընկալման և շարժողական ոլորտի համատեղ աշխա-

տանքի ոչ լիարժեքությունը, տարածության մեջ կողմնորոշման և հավասարակշռության խնդիրները, սեփական շարժումների և մարմնի դիրքի զգացողության խանգարումները, շարժողական գործողություններ կատարելիս սահունության և ռիթմի զգացողության բացակայությունը, հրահանգները լսելու, կատարելու և վերարտադրելու դժվարությունները: Այդ հարցում ադապտիվ ֆիզիկական կուլտուրան հանդիսանում է առաջնակարգ ոլորտ: ԱՖԿ պարապմունքները նպաստում են՝ շարժողական կարողությունների ձևավորմանը, թիմային խաղերում համագործակցությանը և սոցիալական հաղորդակցմանը: Մեթոդական արդյունավետ մոտեցումները ներառում են՝ շարժախաղերի ինտեգրում, բազմակողմանի զգայական խթանների օգտագործում, անհատական մոտեցում՝ հաշվի առնելով երեխայի ֆիզիկական և կոգնիտիվ հնարավորությունները, մոտիվացիան և վարքային առանձնահատկությունները:

Չնայած միջազգային փորձը վկայում է ԱՖԿ պարապմունքների բարձր արդյունավետության մասին, անհրաժեշտ է մշակել և հարմարեցնել մեթոդական միասնական ուղեցույցներ, որոնք կհամապատասխանեն ՀՀ նախադպրոցական կրթական համակարգի առանձնահատկություններին և միջոցներին:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Мельников Е. Ю., Легкая Е. Ф., Ходасевич Л. С., Полякова А. В., Особенности адаптивного физического воспитания детей с расстройством аутистического спектра // Современные вопросы биомедицины. – 2024. – №1.[մուտք՝ 12.08.25թ.]
2. Овеян С.А., Григорян А.С., Взаимосвязь физической культуры с психосоциальным развитием у детей в спектре Аутизма. Физическая культура, спорт и здоровье в современном обществе. Сборник научных статей Всероссийской с международным участием научно-практической конференции Г. Воронеж; 2019; ст. 469-476. [մուտք՝ 13.08.25թ.]
3. Соловьева М. В., Диагностика физического развития и подготовленности детей с расстройствами аутистического спектра // Ученые записки университета Лесгафта. – 2020. – №12 (190), с. 237-241. [մուտք՝ 13.08.25թ]

4. Федорова Н.И., особенности проведения занятий коррекционными физическими упражнениями с детьми 3-4 лет с аутизмом в условиях семьи. Ученые записки университета имени П.Ф. Лесгафта.. – 2020 – № 8 (186), с. 287-291. [մուտք՝ 12.08.25թ.]
5. Bhat A.N.. Motor impairment increases in children with autism spectrum disorder as a function of social communication, cognitive and functional impairment, repetitive behavior severity, and comorbid diagnoses: a spark study report. National Institutes of Health, 14(1), (2021), pp.202-219. doi: 10.1002/aur.2453. [-մուտք՝ 14.08.25թ.]
6. Healy S., Nacario A., Braithwaite R.E. & Hopper C.. The effect of physical activity interventions on youth with autism spectrum disorder: A meta-analysis. Autism Research, 11(6), (2018), pp.818–833. doi:10.1002/aur.1949. [մուտք՝ 12.08. 25թ]
7. Ketcheson L., Hauck J., Ulrich D. The effects of an early motor skill intervention on motor skills, levels of physical activity, and socialization in young children with autism spectrum disorder: A pilot study. 2017 May; 21(4):481-492. doi: 10.1177/1362361316650611. Epub 2016 Jun 26. [մուտք՝ 04.09.25թ.]
8. MacDonald M., Lord C. & Ulrich D.A.. Motor skills and calibrated autism severity in young children with autism spectrum disorder. Adapted Physical Activity Quarterly, 31(2), (2014), pp.95–105. doi:10.1123/apaq.2013-0068. [մուտք՝ 11. 08.25թ.]
9. Musiyenko O.V., Chopyk R.V., Kizlo N.B. Influence of adaptive physical education on motor possibilities, behavior and quality of life of children with autism. Vol. 6 No. 2 (2020): Health, sport, rehabilitation DOI: https:// doi.org/10.34142/ HSR.2020.06.02.04 [մուտք՝ 10.08.25թ.]
10. Yang Y. , Chen D., Cai K., Zhu L., Shi Y., Dong X., Sun Z., Qiao Z., Yang Y., Zhang W., Mao H., Chen A. Effects of mini-basketball training program on social communication in preschool children with autism spectrum disorder. BMC Sports Science, Medicine and Rehabilitation. 2024 Apr 24;16(1):92. doi: 10.1186/s13102-024-00885-7. [մուտք՝12.08.25թ.]

11. Touali R., Zerouaoui J., Chakir E.M., Bui, H.T., Leone M. և Allisse M. Impact of a Sensorimotor Integration and Hyperstimulation Program on Global Motor Skills in Moroccan Children With Autism Spectrum Disorder: Exploratory Clinical Quasi-Experimental Study. JMIR Formative Research, 9, 2025, e65767. DOI: 10.2196/65767. [մուտք՝ 13.08.25թ.]
12. Zeidan J., Fombonne E., Scora J., Ibrahim A., Durkin M. C., Saxena S., Yusuf A., Shih A. & Elsabbagh M. Global prevalence of autism: A systematic review update. National Institutes of Health. 2022 May;15(5):778-790. doi: 10.1002/aur.2696. [մուտք՝ 14.08.25թ.]

BASIC PRINCIPLES AND APPROACHES TO MOTOR SKILLS DEVELOPMENT IN PRE-SCHOOL CHILDREN WITH AUTISM

V. R. Chakhoyan,
Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: autism, preschool children, motor skill development, adaptive physical culture, inclusive education.

Research relevance: Over recent decades, the prevalence of autism spectrum disorders has risen to roughly 1% of children worldwide (WHO data). In parallel, the expansion of inclusive education has created a demand for evidence-based motor development interventions for preschoolers with autism; however, no internationally accepted methodology for such interventions currently exists. Autism negatively impacts motor skill acquisition, which impairs children's physical health, cognitive development, and social integration. Therefore, developing effective methodologies to enhance motor skills in preschool-aged children with autism is a critical task.

Research aim: To study, analyze and substantiate the basic principles and approaches to the methodology of motor skills development in preschoolers with autism.

Research methods and organization: Analysis and synthesis of scientific and methodological literature published in 2014–2025 (around 30 domestic and foreign sources). International experience in adaptive physical culture (Russia, USA, Canada, Europe, Asia) was also reviewed.

Research result analysis: It was determined that 60–80% of preschoolers with autism exhibit motor impairments such as poor coordination, balance, spatial orientation, and low muscle tone. Effective methodological approaches include integrating ball games, using multisensory stimulation, and tailoring exercises to each child's functional abilities.

Conclusion: Regular adaptive physical culture sessions, especially when initiated in early childhood, help correct motor deficits, reduce anxiety, and improve social skills in children with autism. It is necessary to develop methodological recommendations adapted to the specific conditions of Armenia's national preschool education system.

ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ И ПОДХОДЫ К ФОРМИРОВАНИЮ ДВИГАТЕЛЬНЫХ СПОСОБНОСТЕЙ У ДОШКОЛЬНИКОВ С АУТИЗМОМ

В. Р. Чахоян,

Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: аутизм, дошкольный возраст, двигательные способности, адаптивная физическая культура, инклюзивное образование.

Актуальность исследования: За последние десятилетия во всем мире отмечается устойчивый рост числа детей с аутизмом, достигающий примерно 1% детского населения (по данным ВОЗ). Одновременно развитие инклюзивного образования требует внедрения научно обоснованных программ двигательного развития для дошкольников с аутизмом, однако единые международно признанные методики такого развития в настоящее время отсутствуют. Аутизм отрицательно сказывается на развитии двигательных способностей, что ухудшает физическое здоровье, замедляет когнитивное развитие и затрудняет социальную интеграцию ребенка. В этой связи назрела необходимость разработки эффективных методик формирования двигательных способностей у детей дошкольного возраста с аутизмом.

Цель исследования: Изучить, проанализировать и обосновать основные принципы и подходы к методике формирования двигательных способностей у дошкольников с аутизмом.

Методы и организация исследования: Анализ и обобщение научно-методической литературы 2014–2025 гг. (около 30 отечественных и зарубежных источников). Изучен опыт специалистов России, США, Канады, стран Европы и Азии в области адаптивной физической культуры.

Анализ полученных результатов: Установлено, что у 60–80% дошкольников с аутизмом наблюдаются нарушения координации, равновесия, пространственной ориентировки и сниженный мышечный тонус. Эффективными методическими подходами являются интеграция подвижных игр с мячом, использование мультисенсорной стимуляции и индивидуализация заданий с учетом функциональных возможностей ребенка.

Краткое выводы. Систематические занятия адаптивной физической культурой с раннего возраста способствуют коррекции двигательных нарушений, снижению тревожности и улучшению социальных навыков у детей с аутизмом. Необходимо разработать методические рекомендации, адаптированные к особенностям национальной системы дошкольного образования Армении

Տեղեկություններ հեղինակի մասին

Վարդանուշ Ռոբերտի Չախոյան՝ հայցորդ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,
E.mail: vardanush.chakhoyan.2023@sportedu.am

Information about the author

Vardanush Robert Chakhoyan: Applicant, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E.mail: vardanush.chakhoyan.2023@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 23.08.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 27.08.2025–ին:

Գրախոս՝ բ.գ.թ., դոցենտ Վ. Աբովյան